

ՌԻԽՏԱԻՈՐԱՅ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Գրուած՝ Պօղոս Պատրիարքի կողմէ

ՌՄԺԸ (1769) և ի Հսկտեմբերի ԻԱ, մեղապարտ Պօղոս Պատրիարքս Սուրբ Երջանդեմի սկսայ աստ զհարկաւորսն Սրբոյ Տանս գումանս իւրս գրով արձանացուցանել վասն պիտանաւորութեան ապագայիցն:

Նախ յորժամ տէրունական ուխտաւորքն Աստուծով բարեաւ ելանեն ի Յապէ, ըռէյիլզն տեղւոյն իսկոյն փայեկ յղելոց է ծանուցանելով զորքանութիւնն և զորպիսութիւնն, որքան և կարէ, յղելով և զգիրն հրաւիրակին որ ընդ նաւին է, և աստ ժամանելոյն փայեկին՝ իսկոյն գնա-

խապատրաստեալ կոնդակն կատարելով, ըստ ժամանակի պատկանաւորութեանն գրել տալով զբարբրին՝ հանդերձ ըռէյիլզի գրով ընդ կրունկն դարձուցանելի է գփայեկն, տալով զվարձն: Եւ ըռէյիլզն տեղւոյն ըստ ամենայնի ամենայն հոգալով կատարելոց է, յամենայն կողմանց գուն զործեալ վասն բեռանց շուտով յղել: Նախ զվանքի բեռինքն, և այն ևս նկատմամբ ըռահին և այլոց՝ շրջահայեցողութեամբ: Եւ իրեն զիւր հոգայիքն կատարեսցէ, որ է նախ բեռինքն, բրբնձագինն, զաֆարն և այլն, ըզ-

ճանաչումներ ունենալ, այս ճանաչումներուն մէջ է նաեւ հաւատքը որ անպատճառ մտածելու ամբը չէ: Երբ ձկը հաւատամն՝ չի նշանակեր թէ «կը տեսնեմ», և Ս. Եկեղեցւոյ Հայրերէն մին նոյնիսկ հաւատքը աւելի վար գտած է գիտակից վիճակէն: Ունէ միտք որ տտակ չէ ընդունելու հաւատքն ու անոր ուսուցումները, այսինքն Ուրմանացանի առակին մէջ յիշուած բերրի հող մը չէ, չի կրնար ընդունիլ զայն: Թաշեալ Փրկիչը, — կ'ըսէ Ս. Պօղոս Առաքեալ —, «Հրէից գայթակղութիւն էր և հիթանոսաց յիմարութիւն» (Ա. Կորնթ. Ա. 23): Իսկ Բասթալ կ'ըսէ թէ սոմանք Սկզբնական Մեղքը անհեթեթ բան մը կը նկատեն: Հետեաբար զարմանալու պատճառ մը չկայ երբ կը քարոզենք իրողութիւնը այնպէս ինչպէս որ կայ առիկա: Շնորհը զերջապէս, ըստ սահմանի և էապէս ի վերուստ կը տրուի ձրիաբար, այսինքն ոչ թէ մարդոց արժանիքներուն համաձայն, այլ, ըստ կամս Աստուծոյ, այսպէս հասկցուած, շնորհին անտրիտուր շնորհումը մեզ կը մօտեցնէ Սարկի Պոյութեանապաշտութեան կեդրոնական գաղափարին, որուն համար անտրիտուր տըւութիւնը հոմանիշ է ոչ — բանականին, և գրեթէ հոմանիշ է անհեթեթին: Այս արագ ակնարկը բաւ է ցոյց տալու համար մեզի թէ ինչպէս քրիստոնէական

գաղապահութեան մեր յարումը և անոր կառելիը կ'առաջնորդէ Գոյութեանապաշտութեան:

Գոյութեանապաշտներէն ոմանք էութիւնը աւելի առաջ կը դասեն գոյութենէն, սակայն այսպիսի դասաւորում մը ճիշդ կ'ըլլա՞նք քանի որ էութիւնը իմանալի է ի վերջոյ, մտածումն է որ կրնայ էութիւնը ըմբռնել: Գոյութեանապաշտութեան հիմնական գաղափարը կ'ապացուցանէ որ մարդը լինելութեան իր ճամբուն մէջ նախաճակատադրուած չէ: Իւրաքանչիւր ոք ինք է որ կ'որոշէ թէ ինչ պիտի ըլլայ ինք, իր անհատական էութիւնը, վասնզի մենք ճշմարտապէս ենք այն ինչ որ կ'ըլլանք: Ապրելուն և պարզապէս գոյութիւն ունենալուն միջև կարեւոր տարբերութիւն մը կայ: Գոյութիւն ունեցող անհատ մարդուն մէջ ստեղծագործելու շնորհը դրուած է: ուրիշ գոյութիւն ունենալ, ինքզինք գերազանցելով ինքզինք ըլլալ կը նշանակէ:

Ինչո՞ւ ինքզինքը պիտի գերազանցէ մարդը, ի՞նչ խեղ ունի այսպէս ընելով, և ուսկի՞ց կուգայ ստեղծագործելու մարմնը: Իր այս ձգտումին մէջ մարդը կը տեսնէ, կը ճանչնայ իր Արարիչը՝ որուն գործը և միջամտութիւնը ակնհայտ կը գտնայ իր կեանքին մէջ:

ԲՈՒ ՀՈՒՆԻՔԻ:

Թրգմ. ԶԱԻՆ ԳՐԳ.

տէֆտէրն բրընձագնին յղելով՝ ծանուցէ զպատրաստ լինելն։

Եւ ի յամին եթէ են պատրաստեալ և յոյնք ուխտաւորք և ոչ գոյ որոգայթ ի ճանապարհի, ի միասին երթան երկու թարգմանքն առ տեղւոյն միւսէլլիմն որ նա գրէ, և վանքերու վէթլիքն գրեն Ըոէմէնու միւսէլլիմին թէ այսինչ օր զուխտաւորքն ի Յոպպէու բեր, և գնացեալ բերէ ի յիէմէլէ։ Եւ անդ ի մտանելն մերայնոց ի վանքն Սրբոյն Գէորգեայ՝ մեր ըռէյիդն փայեկով, որպէս միւսքն ի միասին, եթէ միատեղ գան ուխտաւորքն նոցին ես, ըզգիրն յէթ թէ անյիւտ հասին։ Նաև միւսէլլիմն տեղւոյն տեղւոյս միւսէլլիմին գիր որ յղեն իւրն, որ և նա յառաւօտուն զօրովքն ելեալ ի սահմանն Սրբոյ Բաղաքիս գնացեալ նստելոց է, որ Ըոէմէնու միւսէլլիմն մինչ և ի սահմանն բերեալ զուխտաւորսն՝ տեղւոյս միւսէլլիմին թէսլիմ առնելոց է և դառնալոց։ Եւ սա Աստուծով որքան կարէ ջանայ և խաղաղութեամբ բերեալ հասուցանէ ի Սուրբ Բաղաքս և ի հոչակաւոր Աթոսս։

Եւ ի գալն ամենից և ի մտանելն ի Հոգեւորան, զքիրածիքն բոլոր հանեն արտաքս, և զուխտաւորքն հրաւիրեն յեկեղեցին ի դուռն, ԺԵ. ԺԵ. փարայի մոմ տոեալ մեծք և փոքրք՝ մտանեն յեկեղեցին և ուխտ արարեալ ելանեն, արքն ի սեղանն, կանայքն ի տանիսն վայելին ըզկերակուրն և զըմպելին։ Եւ ժամօրհնողն կամ հրաւիրակն ծանուցանէ նոցին վասն պատրաստ պահելոյ զՍուրբ Գլխադրի ըզհարկն զաֆարիւ որ է Գ. Գ. ոսկի, և ամէն ոսկի ձԺ. փարայ է, մէկ զըշ. աջահամբոյր նոյնոյ տեղւոյն, Ժ. Ժ. փարայ Սուրբ Մակարայ գերեզմանին, մէկ զըշ. Սուրբ Յարութեան գրան ընծայ, Ե. Ե. փարանոց մոմ Սուրբ Օհաննու աւետարանչի եկեղեցւոյն հանգիւրձ աջահամբոյրի։ Զոսոս պատրաստեալ ի գիշերի նախկին սաղմոսի օտոպաշին ձայն տըվեալ բերեն յեկեղեցին։ Դարպասն վարդապետն գրագրին և փող տեսանող վարդապետիւն և մոմն վարդապետիւն ի վերայ փռուածի նստեալ՝ առեալ զԳ. Գ. ոսկիքն թէ կարգաւորաց, թէ աղայոց թէ մեծաց առհասարակ, և տայցէ իւրաքանչիւրոց Բ. Բ. մոմս Ե. Ե. փարանոցս, որոց գինքն ի մէջ Գ. Գ. ոսկեացն

է, որ տէրունական ուխտաւորքն առեալք զմի մոմն ընդ խաչահամբոյրին Սուրբ Գլխադրին, և միւս մոմն Սուրբ Յարութեան գրան տան ընծայ զկնի ծանուցմանց զորս առնեն։ Եւ ի յառաւօտն պատրիարքն Աթոռոյս ծանուցումն առնէ մխթարական և բարի եկիւք ասէ ի բերանոյ Սրբոյ եկեղեցւոյն և ուրախացուցէ սիրական բանիւք։ Եւ զկնի սրբոյ պատարագին գնան ի սեղանն և անդ ծանուցումն հարկաւորի վասն տաւոյ զվարձս զբաստուց և ուղտուց։ Եւ ապա զդուռն վանուց տալ փակել զմեծն, և ի պարտիզի դուռն վասն հարկաւորութեան բանալ և փակել, և ոչ տալ թնյլ ամենից մտանել, և որքան այսպէս՝ ի Սուրբ Հրեշտակապետ պատարագ տալ մատուցանել վասն ժողովրդեանն, զի մի եկեղեցին աստ։

Եւ ապա նստիլ ի դարպաս դարպասն վարդապետն, վէթլին և ամենայն ծիրանիքն զդարպասն առեալ գրեն զտասանորդըն, որ է հնգէն մէկն, զքառասնիցն վասն կենդանեաց և ննջեցելոցն։ Եւ ապա հրաման տայ օտապաշտուն ըստ անձին և ըստ նէֆէրին տնօրինեցեն. զկանաւորսն և զբէքեարսն ջոկ ջոկ մահչէներսն հանգուցանելով։ Եւ ծանուցումն պարտի առնել վասն գրվորցն. տալոյ, վասնխոստովանութեան արանց և կանանց, որոց յատուկ յատուկ են խոստովանահայրք։ Եւ առնել զթէսքիրէսն մութէվէլլուսն որ է Ը. զըշ. Ե. փրյ., և մէկ փրյ. ես քաղաքի գոնապատին. և պատրաստեալք հրաւիրակօքն գնան ի Սուրբ Յարութիւնն՝ յորժամ բանի և ժամակոչն ձայնէ։ Եւ զկնի ուխտաւորացն զնալոյն, տանելով ընդ իւրեանս ԺԵ. փարանոց մոմքն, մտանեն ի ներս։ Զթէսքիրէյսն մեր թարգմանքն առեալ՝ տան գրիւ և մէկ մէկ փրյ. գրողչէք տան մի անգամ, և մէկ մէկ փրյ. գոնապատին. մինչ և ի Սուրբ Զատիկն քանի որ մտանեն մէկ մէկ փրյ. տան զափուճուն և մտանեն։ Իսկ զկնի Սուրբ Զատիկն ալ փարայ տալ չի կայ։

Որ օր որ լինի Պօլսոյ նաւի ուխտաւորքն որ մտանեն Սուրբ Յարութիւնն՝ պատուաւորացն մերոց չուրջառով մտանէ հանգիւրձ ի Սուրբ Յարութիւնն, զոյգ կոչնակ հարկանեն, զիւրն անդ ի անօրինական տեղիքն թափօր ելանեն որպէս յամենայն ուրբաթի, շաբաթի և կիրակի երեկոյեանքն և յամենայն տեղիսն ծանուցանեն սակա-

ւութ ասութեամբ: Զգիշերն մնան և քեր-
մեռանդութիւնս անեն, և առաւօտն սուրբ
պատարագն անդ մատուցանելոյն զկնի գան
ի Սուրբ Աթոս: Եւ ի գլխաւորացն քանի
մի անձինք ի պատրիարկարանն բերեալ՝
զցքի տան և շնորհաւորէ զանունն մահտե-
սութեանն, և գնան ի հասարակ սեղանն,
և անդ լաւապէս ծանուցմամբ առհասարակ
ամենեցունց յոյժ շնորհակալութիւնս տա-
լով վասն ողորմութեանց տրոցն՝ շնորհա-
ւորս արասցէ զանուն մահտեսութեանն: Եւ
այնուհետեւ իւրաքանչիւր զկերակրոյն պատ-
րաստութիւնն տեսանելոց է: Զկնի սեղա-
նին բերեն զքանի մի անձինս գլխաւորացն
ի պատրիարկարանն, մէկ մէկ զինի տան և
զկնի դալէ և վարգեջուր ծխանելիօք, և
արծակեցին ուրախութեամբ:

Եւ հարկաւոր ծանուցումն պարտի լի-
նիլ վասն զգուշութեան բնակչաց քաղա-
քիս առհասարակ, վասն առից և տրոց,
վասն պարկեշտութեամբ չըջելոյ, վասն ի
մահըլայս լատինաց, յունաց, հրէից և այ-
լազգեաց չըջելոյ, յորոց մեծամեծ որու-
գայթք ծնանին, և ի քաղաքն ի տունս
չքնանալոյ, թարց գիտութեան վէքիլին ի
տեղս չգնալ չըջիլ, մանաւանդ արտաքոյ
քաղաքին, ի Տաճարի դրանցն զգուշանա-
լոյ, լաթ ի մէջ վանքիս չի լըվանալոյ, զի
ջուրն միայն ոչ բաւականնայ խմել, լաթ
լըվանալոյ պարտէզ գոյ, ի յօտայնս քօ-
մոթի կամ փայտի կրակ չգնելոյ, զի շատք
մահացան, զփէնճէրէյսն բաց չթողուլ և
ննջել, զջուրն՝ մանաւանդ անձրեւաց՝ թարց
եփելոյ չի խմել, զկնի քանի աւուրց պատ-
ուիրել վասն բերեալ էմանէթից, զի օրով
յառաջ բերցեն, զի գիր պատրաստեսցի,
ընդ այլոց ազգաց՝ տաճկաց և քրիստոնէից
մի ինչ վիճել, զխօսս մեծի արքային և
զայլ իրագործութիւնս մի խօսիլ, զի որու-
գայթ լինի:

Եւ զկնի Սրբոյ Յարութեանն ի Սուրբ
Հրեշտակապետ, ի Սուրբ Աստուածածնի
գերեզմանն, ի Սուրբ Փրկիչ, ի Սուրբ Թէո-
դորոս եկեղեցին ծանուցմամբ տանել հրա-
ւիրակացն, մէկ մէկ զըշ. Ժողովի՝ Ժ. Ժ.
փարանոց մօմս առնելով: Եւ զկնի այսց
ծանուցումն հարկաւորի զի կանայքն այ-
սուհետեւ ի Սուրբ Թորոս եկեղեցին երթի-
ցեն եկեցսցէին, զի նոցին խոստովանահայրն
քահանայաւք ի Պոլսոյ եկեալ ուխտաւորացն
սկսանին անդ ասել միշտ:

Եւ զկնի քանի մի աւուրց զարսն ըստ
պատուաւորութեանն դասք դասք յիսու-
նով, վաթսուեով բերին տէֆտէլով պատիւ
ի վերին դարպասի մեծ օտայն, երեք կամ
չորս կերպ կերակրով, անուշահամ զին-
եաւ, կերպակերպ գաւաթներով և ոսկէ-
զօծ թասերով վերջացուցեալ՝ պատրիարկ
խրախացուցէ և մեծ շնորհակալութիւնս
տայցէ վասն տրոցն և ողորմութեանցն, և
յազգէս մերմէ և յամենայն այցելուաց
շնորհակալութիւնս բերցէ, յիշելով զդար-
պասն, և դառողն և զտըվողսն ընդ ինք-
եան ուրախացուցէ, և զկնի գոհութեանն
օրհնեցէ: Եւ ելեալ ի տանիս զկնի լուաց-
մանն մէկ մէկ զինի արծաթեայ թաներով
և հասարոյր ջուր և օտ ծխանելիք, և իւ-
րաքանչիւր ի բնակութիւնս արձակին խօր
խաղաղութեամբ:

Եւ զկնի յանկարծ, թարց գիտելոյ ու-
մեք, ի միում զիշերի հերիսէ եփել և զի-
շերով նախ քան զարշալոյսն ուխտաւորացն
կերակրելով, արանց և կանանցն, և ապա
զսուրբ վանացս զգուռն տալ բանալ, զի
մի այլազգիքն նեղիցցեն, զի վասն անօրի-
նակ նեղութեանն զորս ետուն ի Ռիֆթի
(1768) ամի մեծի Զատկին, յորմէ երկուց-
եալք զի մի կրիցեմք զմեծագոյն միաս, բարձաք
զպատճառն միասուն՝ գոչելիսն և փոխանակ
արարաք զբրինձեայ փրկաֆն հանդերձ մտով,
թէպէտ սորին խարճն մեծ, սակայն զլուս օրհնեալ ազգիս մերոյ լիցի
ողջ ամէն:

Եւ զկնի քանի շաբաթուց, ի յաւուրս
յորս ոչ լիցի ցուրտ կամ անձրեւ, յորում
աւուր որ լիցի պատշաճ՝ թէ երկուշաբթի,
թէ ուրբաթի կամ թէ յայլ աւուրս, բաց ի
չորեքշաբաթի օրէն, և լիցի օրն պահուց
և ես պատշաճագոյն է, երեկոյեան աղ-
ղիցցեն քիլիոնէ չաւուշիին և այլոց, զի և
գրաստ ոմանց պիտոյանան, և առաւօտուն
զկնի սրբոյ պատարագին ելեալ գնացին ի
Սուրբ Ղազարոս և անտի ի Սուրբ Համ-
բարձում, որ թապալք կային վասն հա-
սարակ միաբանից, մեք բարձաք զայն և
Աստուծով հոգամք այլ իմն կերպիւ: Ի մէջ
Սուրբ Յակոբայ նախ քան զգնալն հարկա-
ւոր է ծանուցումն, որ ընդ ինքեանս ըզ-
դրան զխարաճի գրեանս և զայլս այսպի-
սիս չտանել, նաեւ ոչ շատ փողս, միայն
ի. կամ Լ. փարայս, մէկ մէկ փրյ. Բրիս-

տոսի նստեալ քարի մօտն զաֆար տալոց են, մէկ մէկ փրյ։ Ղազարոսի գերեզմանի զուսն տալոց են, մէկ մէկ փրյ։ Սուրբ Համբարձում, և ի յայտ երկու տեղիսն հինգ հինգ փարանոց մօտն առնելոց։ Եւ ի Գալիլէէ իջանելով, ի Սուրբ Աստուածածնի գերեզմանն զուստն իւրեանց կատարելով, ի զրաւն գան Աստուծով խաղաղութեամբ ի Սուրբ Դանա։ Թէպէտ նախ չորեքշաբթի օրեր գնային, սակայն յոյժ սխալէի լինելով ուխտաւորաց և միաբանից, վասն որոյ այսպէս սահմանեցաք Աստուծով ի ՌԻՄԺԸ (1769) թըվին։ Իսկ եթէ յաւուրս պահուց զիսկիցի, նախ ի Սուրբ Աստուածածին ըզսուրբ պատարագն մատուցեն, և ապա անտի ելեալ գնացեն ի Սուրբ Համբարձում և ապա ի Ղազարոսի գերեզմանն և անտի ի Սուրբ Դանա։ Վասն ճահլից և այլոց զսաստն չէ պարտ պակասեցուցանել, զի մի սանձարձակք լիցին։

Ի տօնի Փիլիպպոսի առաքելոյն զտէֆատէրն քառասնիցն ընթեռնիլ է, և ապա Յիսակայաց պահուց սառլին շարաթոջ ելանելոյն։ Ծարաթ երեկոյանն սկսանելի է իւղագինն, որ ճառայ ասեն, որոց զինն մէկ մէկ զէնջիրլի ոսկի է, որ ի կիրակի առաւօտն գտանօղ մեծաւորն զկնի զգրեալսն ընթեռնելոյ և (որ օրէն էր Գ. Գ. ոսկի գրել. յաւուրս մեր Զ. Զ. ոսկի գրեցին առին և առնեն ի մէնջ, Տէր ընկալցի. իսկ ուխտաւորաց վաթսուն վաթսուն, յիսուն յիսուն, քառասուն քառասուն և այլն ըստ կարողութեանն և ըստ տարւոյն տնօրինեցին) ծանուցանելոց է, զի ամենեքեանք գրեալք տալոց են որ նոքօք վասնեցին անշիջանելի կանթեղուքն։ Եւ կարգեցէ զմինն ի կարգաւորաց ի փերայ և զիշխանս երկու կամ երեք զազիրալք և յորդորիչք ընդ վարգապետին։ Սակայն ի բազում աւուրս վէջին և զարպասճի վարդապետն ընդ ձե-

րունեօքն նստելոց և խիստ մուղիաթ լինելոց է զի արգիւնաւորեցի, և Տէր ամենից կարողութիւն տացէ։

Եւ ի քաղմանալ փողին բերեալ առաջի ծերունեաց վերակացուքն մեծաւորն թէսլիմ առնեն, և ի մէջ տէֆտէրն իւրեանց տան զալէմով նորին գրել, որ ի վերջն, զկնի սրբոյ Զատիկն, տէֆտէրն հիտապելով զբոլորն թէսլիմ առնելոյն հետե՛ւ։ Հոգւոց և շնորհակալութիւն և մէկ գառնուկ մի զինեալ պարգև, զի պարտէզն գնացեալ նստցին և ուրախացցին։ Սուրբ Ստեփանոսի և Դանիէլի գրեանց, սուրբ խաչն ի Սուրբ Աթոս կամ ի Սուրբ Ծնունդն ի ջուրն ձգելոյ և հանելոյ, Տեառնընդառաջի իշխանաց երկու երկու ոսկիքն ի մէջ այս խղազինիս մտանելոց է, և մօմի զին Տեառնընդառաջին հանելով և մօմճիլն տալով՝ ըզմնացեալն գրեն ի տէֆտէրն։ Եթէ Սուրբ Յարութեան գրանբաց լինի, ըստ ժամանակին տնօրինեցէ պատրիարքն հաշուելով զամենայն, և իւրն վեց վեց ոսկի ժամուց, Սուրբ Յարութեան երկու կամ մէկ ոսկի, երկու զըջի մօմ, այն աւուր ժամաբարին երեսուն փրյ, սեղանն մօմ և փարայ բաժանել, Հանգստեան շարական և Աւետարան կարգալ, երեքկնել զծանուցումն զկնի Հոգւոցի, և եթէ այր իցէ՝ զմի դաւաթ զինի տալ և ապա ի պատրիարքարանն բերել, Սուրբ Խաչիւս, նշխար տալ, զկնի զինւոյ, բերան լուային, զահվէին, ջըրին և ծխանելեացն և ապա գնալ ի տունս իւրեանց։ Ի միտ առէք վասն Աստուծոյ լինի՝ հասարակ զբանբացման մի հետեւիք, այսինքն հասարակ հացկերութիւն։ Եւս եթէ ուխտաւորքն յատուկ ի տեղս յորդորմամբ քառասնից բերին, զկէսն ժամաբարացն տան, նոյնպէս և ինքեանք արուցեն, ապա թէ զաղեցեն, լիցին պարտականք։